

— Ո՛ր կարգիլէ քեզ դարձեալ պարկեշտ ու համեստ լինիլ, քաշուիլ գիւղի մը մէջ, սոխ սխտորով ապրիլ, անառակ պերճութիւնդ ուրանալ, հաստ կապերտի մը վրայ ընկողմանիլ, փոխանակ արթայական գգուանաց՝ կոպիտ երկան մը բռնցի հարուածներուն տանիլ, փոխանակ բռնաւոր տիրուհի լինելու խոնարհ աղախին...

— Տէ՛, տէ, երկայն ճամբրու պէտք չի կայ: Որովհետեւ ուզեցիր եւ ջանացիր զիս բռնաւոր տիրուհի մը ընել՝ դու պէտք է հնազանդիս իմ կամացս եւ իմ հաճույիցս:

— Այ՛ս աստիճանի կ'իջեցնես զիս, Անկելինայ:

— Այո, այս աստիճանի:

— Բայց վերջը կը գոջաս:

— Յիմա՛ր, անմիտ մարդ: Չե՞ս իմանար, չե՞ս տեսներ, որ ել քեզմէ զօրաւոր եմ. մոռցա՛ր թէ ինչ որ ես եւ եղեր ես իմ շնորհիւքս է, եւ ինձի՛ կը սպառնաս: Դո՛ւ վատ եւ անպիտան՝ զօրավար լինելու մա՛րդ էիր առանց իմ կամացս, դու պատճառ Յայաստանի բանակին պարտութեան եւ առաջին փախստական, ինչպէ՞ս պիտի արդարանայիր Պրոկոպիոսի ամբաստանութենէն եւ զինուորական դատաստանէն, եթէ իմ ազդեցութիւնս չի հասներ, դու գող աւազակ, որ բանակներ անօթի, անզէն թողէր էիր, եւ իմ շնորհիւ քեզմէ հաշիւ պահանջողներուն բերանը կարկեցաւ: Եւ հիմա ելեր ի՞նձ կը սպառնաս:

— Բայց դու կը մոռնա՞ս, Անկելինայ, որ մենք միմեկ եմք այս սենեկիս մէջ, եւ ես սուր մը ունիմ...

— Սո՛ւր ունիս դու եւ ինձ կը պարծենաս, յիմար, բիւր անգա՛մ յիմար: Այդ սուրովդ գնա ուրիշներուն պարծի՛ր: Նայէ՛, դա աս գաւաթին եթէ ձեռք դպցնես, քովէն անցնիս՝ ես հեռուէն կանցնիմ. դու կրնաս թունաւորին քու այդ քաշութիւնդ գիտեմ եւ փորձը տեսեր եմ. բայց սո՛ւր քաշել, քաւ՛ լիցի, քեզի պէս քաշ զօրավարի գործ չէ:

Բայց շա՛տ եղաւ, Անկելինայ:

— Մանաւանդ թէ շատ քիչ եղաւ. եւ եթէ ուզես դեռ շատ բան կրնամ գտնել խօսելու: